ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱԴԸԳ 4
ՍՈՒԲՍԻԴԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «11» փետրվար 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս Պետական մարմնի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Վ. Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արման Հարությունյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2121-Ն որոշմամբ ամրագրված դրույթները, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով սահմանվում է 09.05.01. 1148. «Արտադպրոցական դաստիարակություն» բյուջետային ծրագրի 11001. «Արտադպրոցական դաստիարակություն» միջոցառման (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում պետական աջակցության տրամադրումը, որի շրջանակներում Կազմակերպությունն իրականացնում է արվեստի, երաժշտության, սպորտի դասընթացներ մարզադպրոցներում, ստեղծագործական և արտադպրոցական դաստիարակության այլ կենտրոններում՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ի:

2. Կողմերի պարտականությունները և իրավունքները

2.1. Կազմակերպությունը պարտավորվում է՝

2.1.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել 1.1 կետով սահմանված Միջոցառում(ներ)ն իրականացնելու համար,

2.1.2. Իրականացնել Պայմանագրի շրջանակներում տրամադրված ֆինանսական միջոցների հաշվառումը և հաշվապահական հաշվառման վարումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ապահովելով օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում սկզբնական հաշվառման փաստաթղթերի ամբողջական կազմումն ու դրանց պահպանումը Կազմակերպությունում,

2.1.3. Միջոցառումների իրականացման ընթացքում աշխատանքների, ծառայությունների և ապրանքների ձեռքբերումն իրականացնել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն,

2.1.4. Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա տասը Պետական մարմին ներկայացնել նախորդ եռամսյակի ընթացքում իրականացված Միջոցառումների վերաբերյալ ոչ ֆինանսական հաշվետվություն՝ համաձայն Հավելված N 2-ի, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություն՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի: Ընդ որում ներկայացված հաշվետվությունը Պետական մարմնի կողմից ընդունվում է թերությունների բացակայության դեպքում կամ հայտնաբերված թերությունները Կազմակերպության կողմից վերացնելուց հետո:

2.2. Պետական մարմինը պարտավորվում է՝

2.2.1. Կազմակերպությանը հատկացնել Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցները՝ ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշմամբ հաստատված

2.2.2. Կազմակերպությանը տրամադրել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն:

2.3. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.3.1. Նախարարությունից ստանալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող գումարը,

2.3.2. իրականացնել օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

2.4. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.4.1. ուսումնասիրել և ընդունել ներկայացվող ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունները՝ Պետական մարմնի պատասխանատու ստորաբաժանման դրական մասնագիտական եզրակացության հիման վրա, կամ հետ վերադարձնել՝ բացասական եզրակացությամբ, ընդ որում բացասական եզրակացությունը կարող է հիմք հանդիսանալ սահմանված կարգով Կազմակերպության ֆինանսավորման նվազեցման համար,

2.4.2. պարբերաբար ուսումնասիրել Կազմակերպությանը հատկացված դրամական միջոցների օգտագործման նպատակայնությունը,

2.4.3. պարբերաբար վերլուծել Կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքները, մշակել առաջարկություններ գործունեության հետագա բարելավման համար, ինչպես նաև տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման վերաբերյալ,

2.4.4. անհրաժեշտության դեպքում Կազմակերպությունից պահանջել ներկայացնելու փաստաթղթեր՝ հատկացված դրամական միջոցների օգտագործման նպատակայնությունը գնահատելու համար,

2.4.5. իրականացնել օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. 2022 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության առավելագույն չափը կազմում է 60841500 (վաթսուն միլիոն ութ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

3.2. Պետական մարմինը 3.1 կետում նշված գումարը ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշմամբ հաստատված համամասնությունների համաձայն փոխանցում է Կազմակերպության գանձապետական հաշվին, ամսական կտրվածքով, ոչ ուշ քան մինչև հաջորդող ամսվա տասը:

4. Միջոցառման հանձնումը և ընդունումը

4.1. Սահմանված կարգով, սույն պայմանագրի 2.4.1 ենթակետով տրված տարեկան դրական եզրակացության հիման վրա մինչև 2023 թվականի հունվարի 15-ը կազմվում և կողմերի միջև ստորագրվում է հանձնման-ընդունման ակտ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտի ձևին համապատասխան:

5. Պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխումը, դադարումը և (կամ) լուծումը

5.1. Պայմանագրից ծագող պարտավորություններն ուժի մեջ են մտնում Պայմանագրի կնքման պահից, տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում են մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

5.2. Պայմանագրի փոփոխումը և(կամ) լրացումը կատարվում է Կողմերի համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագրով, որը Պայմանագրի անբաժանելի մասն է:

5.3. Պայմանագիրը դադարեցվում և(կամ) լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Այլ պայմաններ

6.1. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և(կամ) լրացում կատարվում է գրավոր:

6.2. Պայմանագիրը կազմված է հայերեն, երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.3. Պայմանագրի Հավելվածը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

6.4. Պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005445
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

_____ Վ. Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Վ. Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ

ք. Երևան, Նալբանդյան 50
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018003120
ՀՎՀՀ 02537411

Տնօրենի ժ/պ

_____ Ա. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«11» փետրվարի 2022 թ. կնքված
N ԱԴԸԳ 4 պայմանագրի

«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրային ոչ ֆինանսական ցուցանիշներ

	Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1.	Արտադպրոցական դաստիարակություն	Մարզադպրոցի 36 խմբերում ընդգրկված 370 մանուկների և պատանիների հետ 18 դրույք մարզիչ-մանկավարժների կողմից ուսումնամարզական գործընթացի իրականացում, առողջության պահպանում ու ամրապնդում, նրանց կողմից ընտրված մարզաձևերում ունակությունների ձեռքբերում, մարզական հերթափոխի պատրաստում	«Վ. Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի կողմից մարզական հերթափոխի պատրաստում	Մարզադպրոցում պարապողների թվաքանակի աճ, մարզական բարձր արդյունքներ, արտադպրոցական ծառայությունների որակի բարելավում	31.12.2022 թ.	60 841 500

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005445
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
_____ Վ. Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Վ. Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան 50
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018003120
ՀՎՀՀ 02537411

Տնօրենի ժ/պ
_____ Ա. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«11» փետրվարի 2022 թ. կնքված
N ԱԴԸԳ 4 պայմանագրի

Կազմակերպության անվանումը
Պայմանագրի կնքման ամսաթիվը և համարը

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

....
(ամիսը)

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարագրությունը)	Չափորոշիչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանակահատվածի համար	Ցուցանիշի փոփոխություններն ըստ համապատասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար (սյ. 1+սյ.2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակահատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերությունը (սյ.4-սյ.3)	Տարբերության պատճառը (սյ.2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյ.5-ում նշված տարբերության պարզաբանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
Արտադպրոցական դաստիարակություն	Մարզադպրոցում պարապողների թվաքանակի աճ, մարզական բարձր արդյունքներ, արտադպրոցական ծառայությունների որակի բարելավում:	սան, որից՝						
		տղա						
		աղջիկ						
		մարզչական դրույք						
		մարզիչների թիվ						
		խումբ, այդ թվում՝						

Մարզական արդյունք________________
Տնօրեն՝
Հաշվապահ՝

«.....» .... 2022 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005445
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

________________ Վ. Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Վ. Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ

ք. Երևան, Նալբանդյան 50
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018003120
ՀՎՀՀ 02537411

Տնօրենի ժ/պ

________________ Ա. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ